ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ:
Փոփոխություններ «Medi-Cal»-ի Ձեր ապահովագրի մեջ Ձեր հղիության ընթացքում և ծննդաբերությունից հետո

Այժմ Դուք միայն հղիության հետ կապված և շտապ օգնության ծառայությունների համար եք «Medi-Cal»-ի նպաստներ ստանում: Հղիության վեցերորդ ամսից Դուք կարող եք «Medi-Cal»-ի ամբողջական նպաստներ ստանալ:

Ամբողջական նպաստների մեջ տեղի ունեցած այս փոփոխությունից հետո՝ Դուք պարտավոր եք անդամագրվել «Medi-Cal»-ի որևէ «Managed Care Health Plan»-ի (Managed Care Plan)՝ բացառությամբ մի քանի դեպքերի: Քանի որ Դուք հղի եք, եթե Ձեր բժիշկը «Managed Care Plan»-ի մաս չի կազմում Ձեր շրջանում, Դուք կարող եք խնդրել, որ առողջապահական ծրագրին անդամագրվելու պահանջը հետաձգվի այնքան, մինչև ծննդաբերությունից 60 օր անցնի:

«Health Care Options»-ը (HCO) Ձեզ փաթեթ կուղարկի Ձեր շրջանում գործող առողջապահական ծրագրերի մասին: Եթե Դուք ցանկանում եք պահել Ձեր ներկա բժշկին, ապա ընտրություն կատարելուց առաջ հարցրեք նրանից, թե արդյոք նա «Managed Care Plan»-ի մաս է կազմում, կամ ուղղակի զանգահարեք Ձեր շրջանի առողջապահական ծրագրեր:

Որևէ «Managed Care Plan»-ի անդամագրվելու, անդամագրման հետաձգում խնդրելու կամ «Managed Care Plan»-ի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ առավոտյան ժամը 8:00-ից մինչև երեկոյան ժամը 5:00-ը զանգահարեք HCO՝ վերջինիս անվճար հեռախոսահամարով:

Health Care Options: 1-800-840-5032

Նախքան HCO զանգահարելը Ձեզ անհրաժեշտ է իմանալ Ձեր բժշկի անունը: Եթե ցանկանում եք անձամբ այցելել գրասենյակ և օգնություն ստանալ, ապա Ձեր փաթեթում նշված են այն վայրերը և ժամերը, որտեղ և երբ Դուք կարող եք օգնություն ստանալ:

Եթե Դուք չեք կարող առողջապահական ծրագրին անդամագրվելը հետաձգելու թույլտվություն ստանալ, Դուք պետք է որևէ «Managed Care Plan» ընտրեք, այլապես մենք ծրագիր կընտրենք Ձեզ համար: